

ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԾԱՆՑԱԿՈՐ
ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ի՞նչ է բառակազմական նշանակությունը և բաղադրյալ բառի ո՞ր բաղադրիչն է նրա կրողը: Այս հարցի կապակցությամբ լեզվաբանական տարբեր աշխատություններում տարբեր մոտեցումներ կան:

Լեզվաբանների մի խումբ /1,36/ գտնում է, որ բառակազմական նշանակությունը դրսևորվում է որպես հետևանք սերող հիմքի /կամ բառի/ և ածանցյալի խոսքիմասային փոխհարաբերության և կարող է բնորոշվել ու նկարագրվել բառակարգային տերմիններով, որպես անցում մեկ խոսքիմասային նշանակությունից մյուսին:

Օրինակ, ասենք, եթե հայերենում կանաչ ածականից կազմվում է կանաչամալ, կառմիկ-ից՝ կառմուել, սև-ից՝ սևամալ, դեռիկ-ից՝ դեղնել, ապա ածանցյալի բառերի բառակազմական նշանակությունը կարող է բնորոշվել որպես «գործողություն նախատիպի արտահայտած հատկանիշի»:

Բայց այսպիսի հարցադրմամբ՝ ա. բառակազմական նշանակությունները դիտարկվում են միայն խոսքիմասային փոխանցման պարագայում. բ. նույն խոսքիմասի սահմաններում կատարված ածանցումը, երբ նախատիպը չի փոխում իր խոսքիմասային պատկանելությունը, ըստ էության դուրս է գալիս նկարագրության սահմաններից /հմտ. լավ-լավիկ, մայր-մայրիկ, այլև՝ ճախր-ճախրանք և այլն/: Այս մոտեցման դեպքում կարծեք թե անտեսվում է բառակազմական տիպը, այն, որ, ասենք, մեր վերևում բերված օրինակներից կանաչամալ և սևամալ իրենց կառուցվածքով տարբեր են կանաչել-ից և դեղնել-ից, որը և պայմանավորում է նրանց բառակազմական նշանակությունների տարբերությունը:

Երկրորդական չէ նաև այն, որ որպես արդյունք բառակազմական յուրաքանչյուր քայլի, երբ նույնիսկ այն կատարվում է այսպես կոչված նվազափաղաքական ածանցի հավելմամբ, նոր բառ է ստացվում իր նոր

նշանակությամբ: Այս վերջին և ճիշտ սկզբունքը գործնականում պաշտպանում են նաև շատ հայ լեզվաբաններ, հատկապես բառարանագիրները, տարբեր բառեր համարելով նաև քերականական-բառակազմական ածանցներով կազմվածները՝ գրել-գրվել, երգել-երգվել, երգել-երգեցնել, առավել ևս՝ ցատկել-ցատկոտել և այլն, թեև շատ դեպքերում ածանցյալներին քերականական բնորոշում է տրվում՝ կրավորական այսինչ բայի և այլն:

Բառակազմական նշանակությունների որոշման տեսակետից ընդունելի չլինելով՝ խոսքիմասային անցումների այս տեսությունը կարող է հիմք դառնալ ուսումնասիրելու և մշակելու բաղադրմամբ խոսքիմասային անցումների ընդհանուր տեսությունը: Ռուսերենի համար դա արել է Պ.Ա. Սոբոլևան /2,11/: Ժամանակակից հայերենի ածանցման պրոցեսում խոսքիմասային անցումների դրսևորումները որպես բառակազմական առանձին կաղապարներ հայ լեզվաբանության մեջ հանգամանալիորեն նկարագրված են: Կատարված է ածանցների ընդհանուր դասակարգում /3, 154-156, 4, 52-53/:

Ըստ բառակազմական նշանակության երկրորդ ըմբռման, որը լայնորեն տարածված է և շատ հետևորդներ ունի նաև հայ լեզվաբանության մեջ, դա այն ընդհանուր իմաստն է, որ տալիս է ածանցը նույն կառուցվածքի /նույն ածանցը և բառակազմական կաղապարը ունեցող/ բառերի առանձին խմբերի /5, 24-25, 6, 256-258/: Այս մոտեցումից բխում է, որ բառակազմական նշանակությունը նախատիպ բառի և ածանցյալի իմաստային տարբերությունն է, որը դրսևորվում է բնականաբար, ածանցյալի մեջ, և նրա իմաստային կառուցվածքի բաղադրիչ է: Բայց երբ հարցը գալիս է այդ նշանակության կրողը որոշելուն, ապա լեզվաբանների մի մասը անվերապահորեն ընդունում է, որ բառակազմական նշանակության կրողը ածանցն է, իսկ մյուսները՝ ոչ: Հարցը ի վերջո հանգեցվում է նրան, թե ածանցը ինքնին որևէ իմաստ արտահայտում է, թե ոչ: Ոչ մեկը չի կասկածում, որ ածանցները «ինքնուրույն անկախ գործածություն չունեցող» /7, 318/ միավորներ են, բայց ահա նրանց իմաստների բնութագրման հարցում դրսևորվում են զգալի տարբերություններ, հաճախ էլ տերմինաբանական անհամապատասխանությունների պատճառով առաջացող թյուրիմացություններ:

Հայ լեզվաբանության համար հիմնադիր նշանակություն է ունեցել Մ. Աբեղյանի մոտեցումը: Մ. Աբեղյանը, որ հայերենագիտության մեջ նաև գիտական բառակազմության հիմնադիրն է, ածանցների ունեցած նշանակությունները կոչում է «ծևական» ի տարբերություն բառերի հիմնական նշանակությունների /8, 235-236/ և գտնում, որ «վերջածանցները միանալով բառերի հետևից՝ շատ անգամ բառի հիմնական նշանակության վրա ավելացնում են ծևական գաղափարներ», «ածանցական մասնիկները հաճախ այսպիսի բազմազան նշանակություններ ունին...»: Ըստ որում Աբեղյանը գտնում է, որ այդ նշանակությունները դրսևորվում են բառի կազմում և կարող են փոփոխվել նախատիպի իմաստային փոփոխությունների դեպքում: Նա բերում է ոգ ածանցի օրինակը, որով կազմված ամառան-ոգ, ծմեռ-ոգ բառերում, ըստ Մ. Աբեղյանի, այն ցույց է տալիս ոչ թե տեղը, ուր ծմեռ, ամառ է լինում, այլ այն տեղը, ուր մարդիկ ծմեռը, ամառը անց են կացնում /8, 235-236/: Այնուհետև Մ. Աբեղյանը ցույց է տալիս, թե այդ ածանցի «ծևական նշանակությունները ինչպես են փոխվում նախատիպերի իմաստային խմբերի փոփոխությանը համընթաց՝ մատն-ոգ, ծեռն-ոգ, անն-ոգ/հագուստ կամ անոթ, որ մարդիկ կրում են մարմնի որևէ մասի վրա/, կտոռ-ոգ, խաղոռ-ոգ/այն գործիքը, որով կտրում՝ խարտում են», փսփս-ոգ, խշխշ-ոգ, ջաղոռ-ոգ /«գործողություն»/, առևմտ-ոգ, հավխոս-ոգ/«ժամանակ»/ և այլն /8,236/:

Բառակազմական այս կոնկրետ նշանակությունների Մ. Աբեղյանի ծևակերպումները կարելի է, թերևս, ավելի ճշգրտել, բայց այստեղ կարևորը Մ. Աբեղյանի այն դիտարկումն է, որ «ածանցների տարբեր մասնավոր իմաստները շատ հաճախ պայմանավորված են լինում բաղադրական հիմքով» /8, 287/:

Ռուս լեզվաբանության մեջ նման տեսակետ է պաշտպանում Գ. Վինոկուրը: Նա գտնում է, որ ոչ մի ածանց ինքնին իմաստ չունի այն առումով, ինչ առումով խոսք է լինում հիմք բառերի արտահայտած իմաստների մասին: Ածանցը, ըստ Գ. Վինոկուրի, իմաստակիր է այնքանով, որքանով, փոխելով առաջնային հիմքի նշանակությունը, այն վերածում է ածանցյալի իմաստի, առաջնային հիմքի նշանակության մեջ այս կամ այն փոփոխությունն է մտցնում /10, 425/: Երկու լեզվաբանների մոտ էլ, ինչպես երևում է, առաջնային պլան է մղվում ածանցների գործառական արժեքը /ծանրաբեռնվածությունը/, որով և

որոշվում է ածանցի արտահայտած իմաստի/հայ լեզվաբանական գրականության մեջ այն հաճախ կոչվում է նաև ածանցի իմաստ, ածանցի կամ ածանցական նշանակություն, բառի ածանցային իմաստ, տե՛ս, օր., 7, 132, 318/ տեղը բառի իմաստային կառուցվածքի մեջ:

Ուսև լեզվաբանության մեջ Գ. Վինոկուրի հետևորդները /Ե.Ս.Կուբրյակովա, Ե.Ա. Ջեմսկայա, Վ.Վ. Լոպատին, Ի.Ս. Ուլուխանով և ուրիշներ/ որպես հիմնաթեզ ընդունում ու բացարձակացնում են Գ. Վինոկուրի այն մոտեցումը, որ ածանցյալ բառի նշանակությունը կանխորոշվում է առաջնային սերող հիմքի իմաստով/10, 421/:

Այս մոտեցումով բառիմաստները ուսումնասիրող լեզվաբանի նպատակը սերող հիմքի և ածանցյալի իմաստների համադրական ուսումնասիրությունն է, որը սկզբունքորեն այլ բնույթ ունի, քան սերող հիմքի իմաստը: Այս այս ընդունք պայմանավորված է նրանով, որ ածանցը նախատիպ սերող հիմքի իմաստի մեջ մտցնում է այս կամ այն փոփոխությունը դառնալով ածանցյալի իմաստային բաղադրիչը, կազմիչը:

Այս պարագայում ածանցի բառակազմական նշանակության իմաստային վերացարկումը կարող է մոտենալ բառակարգային նշանակություններին, կամ, ուսումնասիրությունը իմաստային նվազագույն ընդհանրություն ունեցող բառախմբերին կամ նույնիսկ առանձին ածանցյալ բառերին հասցնելու դեպքում, հակվել դեպի կոնկրետ բառիմաստի նկարագրությունը: Օրինակ՝ - ավոր ածանցի համար որպես ընդհանուր բառակազմական նշանակություն նշվող «նախատիպի ցույց տված առարկան ունեցող» /6, 102/ գոյականական նախատիպերի առկայության դեպքում /զսպանակավոր/, բայց և՛ վեռառնուավոր՝ «վերարկու ունեցող կրող», որը ըստ էության նրա բառային կոնկրետ նշանակությունն է:

Մյուս կողմից, առանձին ածանցներ կարող են դրսևորել ընդհանուր բառակարգային նշանակություններին խիստ մոտեցող կամ նույնիսկ նույնացող բառակազմական նշանակություններ: Այդպիսի բնույթ ունի, օրինակ, անորոշի-ել-ը, երբ այն բայեր է կազմում գոյականական կամ ածականական հիմքերից /քաղել/: Այս դեպքերում -ել-ի նշանակությունը սոսկ «գործընթացայնությունն» է /12, 319/:

Նման հարցադրումից ակնհայտ է, որ բառիմաստ-բառակազմական նշանակություն-խոսքիմասային նշանակություն հասկացությունների համակարգում բառակազմական նշանակությանը միջին դիրք է հատկացվում. մերթայն մոտեցվում է բառի կոնկրետ իմաստին, մերթ նկարագրվում որպես ինքնուրույն միավոր, իսկ հաճախ էլ նույնացվում է բառերի ամենաընդհանուր նշանակություններին:

Այս մոտեցումը շատ պարզ արտացոլվում է նաև բառարաններում:

Ինչպե՞ս են իմաստային տեսակետից բնութագրվում, օրինակ, աստիճանական սերման հարաբերությամբ կապված հետևյալ բառերը է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»՝ լույս-լուսավոր-լուսավորել-լուսավորիչ-լուսավորչական-լուսավորչականություն.

Լույս բառը /քննվում են հիմնական իմաստները/, որը բաղադրյալ չէ, ստանում է իր առարկայական բնութագիրը՝ «Մարմնի արծակած ճառագայթային, /ոմանց կարծիքով՝ կորպուսկուլյար/ էներգիան, որ ընկալվում է աչքով և տեսանելի դարձնում շրջապատի աշխարհը»: Լուսավոր բառը, որը առաջինի ածանցյալն է, արդեն լրացուցիչ իմաստային բնութագիր է ստանում՝ «լույս արծակող՝ տվող, լուսատու». բնականաբար փոխվում է նաև բառի խոսքիմասային նշանակությունը: Լուսավորել բառի մեջ որպես իմաստային ելակետ արդեն հանդես է գալիս լուսավորող՝ -ավորի միջոցով ստացած բառակազմական հավելյալ նշանակությամբ, և ահա բառը բացատրվում է որպես «լույս տարածել, լույսով լցնել, լուսավոր դարձնել»: Վերջին բացատրությունից ակնհայտ է -ել-ի բառակազմական գործընթացային նշանակությունը՝ «դարձնել», որից բխում է խոսքիմասային անցումը ածականից բայի: Բառակազմական հաջորդ քայլում լուսավորել բայը ստանում է -իչ ածանցը, որի դեպքում տեղի է ունենում -ել ածանցի անկում՝ ունենում ենք զրո ածանց -ել-ի բառակազմական նշանակությամբ՝ լուսավորիչ, որը բացատրված է «լուսավորող, լույս սփռող, տարածող», իսկ իր բնույթով և՛ ածական է, և՛ գոյական՝ անձ, որ կատարում է տվյալ գործողությունը, կամ իր, որ ծառայում է տվյալ գործողության կատարմանը՝ «լուսավորիչ սարք»: Ածանցման հաջորդ աստիճանը՝ լուսավորչական, բնականաբար պետք է ստանա «լուսավորչին հատուկ՝ վերաբերող» բացատրությունը /բառարանում բերված են միայն

դավանաբանական բացատրություններ/, իսկ լուսավորչականություն բառը արդեն ստացել է «լուսավորչական լինելը /2/ իմաստավորումը:

Բերված բացատրություններից ակնհայտ է, որ բառի բառակազմական նշանակությունը զգալիորեն մտնում է բառի իմաստային բացատրության մեջ, դառնում նրա անբաժանելի բաղադրիչը:

Նույն ածանցումով՝ որպես բառակազմական վերջին քայլով կազմված բառերի բացատրության ընդհանուր սխեմայի հնարավորությունը հենց դրա լավագույն ապացույցն է: Օր. ընկերական՝ «ընկերոջը հատուկ, վերաբերող», ածանանական՝ «ածականին հատուկ, վերաբերող», քարեկամական՝ «քարեկամին հատուկ, վերաբերող», կամ սևանալ՝ «սև դառնալ», ածանանանալ՝ «ածական դառնալ» և այլն, և այլն:

Իսկ սրանից էլ բխում է, որ եթե բառակազմական նշանակությունը մի կողմից բաղադրյալ բառի բառիմաստի բաղադրիչն է, որը նրանից, որպես սերող հիմքից, նոր ածանցումների դեպքում մտնում է բառիմաստի մեջ որպես հիմքի հիմնական նշանակություն, ապա մյուս կողմից էլ բառակազմական նշանակությունը ընդհանրաճանաչ ընդհուպ կարող է մոտենալ քերականական, հատկապես խոսքիմասային նշանակությամբ /հատկապես 13 և նրան հետևողները/:

Բառակազմական իմաստների ուսումնասիրության մեջ երկրորդական խնդիր չէ նաև նրանց ինչպես նկարագրելու, ներկայացնելու, բնութագրելու հարցը: Իսկ դա սերտորեն կապված է բուն ածանցման ուսումնասիրության ու նկարագրության եղանակի հետ: Այսպես, օրինակ, եթե Մ. Աբեղյանը և նրա հետևորդները ածանցների բառակազմական նշանակությունները քննում են որպես նրանց նշանակություններ, ապա Ա. Մուրվալյանի /14/ մոտ դրանք դիտարկվում են որպես «ածանցներով բաղադրված անունների նշանակություններ կամ իմաստ»: «Ռուսական ակադեմիական քերականության մեջ յուրաքանչյուր խոսքի մասի բառերը նախ խմբավորվում են ըստ բաղադրական հիմքերի խոսքիմասային պատկանելության /օր. բայերից, ածականներից ածանցված գոյականներ և այլն/, այնուհետև նման ենթախմբերի բառերը ստորաբաժանվում են ըստ բառակազմական նշանակությունների ու նկարագրվում այդ կարգի բառեր կազմող ածանցները» /4, 79/:

Կան նաև այլ ավանդական ու նոր մոտեցումները համակցող լուծումներ: Օրինակ, Ս. Ա. Գալստյանը /4/ ածանցների բառակազմական նշանակությունները դիտարկում է բառակազմական առանձին կադավարների ներսում, որոնք կազմվում են տարբեր խոսքիմասային հիմքերի և ածանցների զուգորդմամբ, բայց այս դեպքում էլ նկարագրությունը ընդգրկում է նախատիպի իմաստը այս կամ այն աստիճանի վերացարկմամբ /«տեղ», «ժամանակ», «գործիք», «գործող անձ», կամ «նախատիպին հատուկ, վերաբերող», «նախատիպի ցույց տված առարկան՝ հատկանիշը ունեցող՝ չունեցող» և այլն, և այլն: Թեև ուսումնասիրված ծավալուն փաստական նյութը այս դեպքում էլ հնարավորություն է տալիս համապարփակ ընդգրկման ու նոր լուծումների, որոնցից հատկապես կուզենայինք նշել ածանցների հոմանշության ու հոմանշային շարքերի ըստ բառակազմական նշանակությունների ուսումնասիրությունը /6, 250-252/:

Ասվածից պարզ է, որ բառակազմական իմաստաբանության նորագույն ուսումնասիրությունները խոշոր ներդրում լինելով հանդերձ, իրենց հերթին հետազոտությունները խորացնելու ու որոշ հարցերի նորովի մեկնաբանությունների հնարավորություններ են ընձեռում:

1. В. Х. Хохлачева, Словообразование существительных в русском языке /Опыт системного описания/. АДД, М., 1976.
2. П. А. Соболева, Апликативная грамматика и моделирование словообразования. АДД, М., 1970.
3. Գ.Բ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974:
4. Ս.Ա.Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, ԴԴ, 1986:
5. В.И.Максимов, Суффиксальное словообразование имен существительных в русском языке, Л., 1975.
6. Ս.Ա. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, 1978:
7. Ա. Մ.Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, 1932:
8. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1975:
9. Է.Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, 1984:
10. Г. О. Винокур, Заметки по русскому словообразованию, Избранные работы по русскому языку, М., 1959.
11. Է.Բ. Աղայան, Լեզվաբանության հիմունքներ, 1987:
12. И.С. Улуханов, Словообразовательная семантика и принципы ее описания, М., 1977.
13. Ս.Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի բառային կազմը, 1971: